ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ԴԱՍԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԸ



Այս տարի լրանում է նշանավոր թատերագիր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր,Գ. Սունդուկյանի անվան մրցանակի դափնեկիր և ՀՀ թատերական միության գործիչների ամենամյա «Արտավազդ» (բրոնզե) մրցանակի դափնեկիր Ժորա (Գևորգ) Հարությունյանի (1928-2002) 80-ամյակը:

Ժորա (Գևորգ) Սաղաթելի Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեՍբերի 7-ին Երեվանում: 1946 թ. ավարտել է բժշկական տեխնիկումը, իսկ 1962 թ.՝ Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանը: Շուրջ մեկ և կես տասնամյակ՝ 1950-1965 թթ., Ժ. Հարությունյանը աշխատել է Երևանի զանազան բուժիմնարկներում: 1964 թ. աշխատանքի է անցել Խորհրդային Միության գրական ֆոնդի հայկական բաժանմունքի պոլիկլինիկայում՝ որպես գլխավոր բժիշկ: Այնուհետև նա ընդմիշտ թողեց բժշկությունը՝ 1965-ից զբաղեցնելով Խորհրդային Միության գրական ֆոնդի հայկական բաժանմունքի տնօրենի պաշտոնը, և նվիրվեց թատրոնին ու դրամատուրգիային: Ժ. Հարությունյանը կատակել է. «Թե ի՞նչ շահեց թատերագրությունը, ես այդ ասել չեմ կարող, բայց որ բժշկությունը ոչինչ չկորցրեց, դա հաստատ է»: Ավելացնենք, որ հաստատ է նաև իսկական արժեքներ ստեղծողի համեստությունը, առավել ևս՝ հաստատ այն, որ դրանից մեծապես պետք է շահեր հայ դրամատուրգիան:

Ավելի քան երեսուն տարի դրամատուրգը հայկական գրական ֆոնդի տնօրենն էր՝ հսկայական ավանդ ներդնելով դրա կառույցների ստեղծման ու զարգացման գործում (մինչև 1995 թ. մարտ): Ինչպես իր դրամատուրգիայում, այնպես էլ տնօրինության տարիներին ի հայտ եկան Ժ. Հարությունյանի մարդկային բարձր առաքինությունները, անկեղծությունն ու անմիջականությունը, արվեստագետի գեղագիտական ու քաղաքական դավանանքի ներդաշնակությունը, որի հենքը նրա անհուն բարությունն էր:

Այդ բարությամբ են ողողված Ժ. Հարությունյանի կատակերգություններն ու դրամաները, որոնք մշտապես ընդգրկված էին Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Հր. Ղափլանյանի անվան թատրոնների խաղացանկերում:

Ժ. Հարությունյանի երկերը թարգմանվել են մի շարք լեզուներով: Ռուսերեն լույս են տեսել «Գլխի գինն է 50 միլիոն» («Ղազարը գնում է պատերազմ») կատակերգությունը (1969, Մոսկվա) և «Խաչմերուկ» ժողովածուն (1982, Մոսկվա):

Դրամատուրգի գրչին են պատկանում նաև շուրջ տասը կինոսցենարներ,որոնք, գրեթե առանց բացառության, լայն ժողովրդականություն են վայելում:

Ժ. Հարությունյանը եղել է Հայաստանի գրողների միության վարչության երկարամյա անդամ, Դրամատուրգների խորհրդի նախագահ: Պարգևատրվել է ԽՍՀՄ շքանշաններով:

Հայաստանյան մամուլի էջերում նա հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով,հրապարակումներով ու գրախոսականներով, ինչպես գրական-մշակութային, այնպես էլ հասարակական կյանքի զանազան երևույթների վերաբերյալ: «Ոսկե ցլիկ» պայծառ կինոկատակերգությամբ սկսվեց նրա հաղթարշավը արվեստի աշխարհում: Հետո գրվեցին ու բեմադրվեցին «Սրտի արատ», «Ծաղիկների աշխարհում», «Հիվանդ N 199», «Ղազարը գնում է պատերազմ», «Բախտավոր մարդիկ», «Խաչմերուկ», «Քո վերջին հանգրվանը», «Հունիս էր, արև»,«Մեր այս տարիքում» պիեսները, «Շրթներկ N 4», «Հուշարձան», «Հարսնացու հյուսիսից», «Խոշոր շահում», «Հրդեհ», «Ձախորդ Փանոս» կինոպատումները և այլն, որոնցով Ժ. Հարությունյանը հաստատեց իր ուրույն տեղը արդի հայ գրականության և թատերական արվեստի մեջ, դարձավ ժամանակակից հայ դրամատուրգիայի ականավոր դեմքերից մեկը:

Նրա ստեղծագործությունները բեմադրվել են Անդրկովկասի, Կենտրոնական Ասիայի շատ թատրոններում, Հունգարիայում, Բուլղարիայում և ուրիշ երկրներում, նաև տպագրվել և ներկայացվել են Ռուսաստանում՝ արժանանալով ջերմընդունելության:

ԺՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ

Նրա թատրոնը շատ նման է իրեն՝ անկեղծ և թափանցիկորեն մաքուր, բարի ու իմաստուն: Այդ տրտում-զվարթ և զվարթ-տրտում թատրոնը հավասարապես քնարական է ու դրամատիկական, իր մեջ ամփոփում է ինչ-որ աընմբռնելի հմայքի կախարդանք, և դա միշտ ուրախ հրավեր է մտածության՝ կյանքի իմաստի մասին:

Ժորա Հարությունյանը իր aՍμaՕc կյանքում տաղանդավոր կերպով ստեղծել ու ստեղծագործել է մեկ ու միակ թատրոն՝ իր ինքնահատուկ թատրոնը, որ պատկանում է միայն իրեն: Դա թատրոն է՝ քեզ մտերմիկ, մտքով կիրթ ու նրբակերտ:

Ժ. Հարությունյանի կատակերգությունը, իր ամբողջ արտաքին պարզությամբ հանդերձ, միշտ անսպասելիորեն բարդ է և նույնիսկ ասես «բազմաժանր»: Դրամատուրգի անկեղծորեն զվարթ ու լացորոշ կատակերգական ստեղծագործություններում չափազանց սրամիտ են իրավիճակները, խարակտերները, երկխոսությունները, հերոսների հարաբերությունները, ռեպլիկները, ռեմարկները: Ունենալով ծիծաղելի իրադրություններ, կատակերգական խարակտերներ կառուցելու նախանձելի ունակություն, միաժամանակ տիրապետելով թատրոնի բեմական գաղտնիքին՝ դրամատուրգն ստեղծել է իր «թատրոն-ներկայացումը», որում ծիծաղի արտաքին չափազանցության հետևում հաճախ ապրում է կյանքի թաքնված, ասես ոչ ծիծաղելի, այլ տագնապալից ու դրամատիկական երևույթը: Եվ այս ամենը միշտ ունի մարդկային արժեքների վերաբերյալ խոր մտածության շերտ:

Այս թատրոնում լացահայտված է ոչ միայն աշխարհի հակառակ երեսը, այլև մեր առօրյայում ներթափանցված չարիքը: Մարդկային արժեքներն այստեղ ապրում են և՛ կատակերգական, և՛ լուրջ իրավիճակներում, սակայն վերջիններիս մեջ էլ կատակերգական բնույթ ունեն:

Ժ. Հարությունյանի կատակերգության ծիծաղի տարերքում հերոսի անհատական, մարդկային հատկանիշները չեն վերանում, չեն համահարթվում, այլ առավել սրվում են և ընդգծվում: Դրանք կատակերգական դիմակներ չեն, այլ

կենդանի մարդիկ, որոնք օրինաչափ պատահականության մերումով հայտնվել են ծիծաղելի դրության մեջ:

Եվ որ շատ կարևոր է, Ժ. Հարությունյանի կատակերգությունը լոկ իրավիճակների ու խարակտերների կատակերգություն չէ, այլ բառի, որը հաճախ դառնում է դրամատուրգի ամբողջ ստեղծագործության խնդիրը:

Այս բոլոր հատկանիշները տարբեր չափով ու երանգավորմամբ բնորոշ են «Սրտի արատ», «Ծաղիկների աշխարհում», «Հիվանդ N 199», «Ժամադրություն », «Զախորդ Փանոս» կատակերգություններին, «Ոսկե ցլիկ», «Շրթներկ N 4», «Հարսնացու հյուսիսից» և այլ կինոսցենարներին, որոնք, պատմելով լավ ու բարի մարդկանց բարդ, հաճախ դժվարին ճակատագրի մասին, միաժամանակ երգիծորեն ներկայացնում են իր տեղում չգտնվող մարդուն, պաշտոնամոլությունը, կեղծավորությունը, ստորաքարշությունը, կեղծիքը, անգթությունը, եսակենտրոնությունը և մարդկային առաքինության ուրիշ հակոտնյաներ:

Ժ. Հարությունյանի դրամատուրգիան հարաբերվում է մեր ազգային գրականության լավագույն ավանդույթներին և միևնույն ժամանակ իր խորքում արդիական է:

«Այս աշխարհը կատակերգություն է նրա համար, ով մտածում է, և ողբերգություն նրա համար, ով զգում է»,- այս խոսքը Ժ. Հարությունյանի դրամատուրգիայի ընթերցման բանալին է, նրանում ողբերգականի ու կոմիկականի չափաբաժինը: Այս ճանապարհին էլ ծնվեց ժանրային շարժումը դեպի դրաման («Հուշարձան», «Խաչմերուկ», «Հունիս էր, արև»):Ժ. Հարությունյանի պիեսներում ներքին աշխարհն ու հերոսների բնավորությունը չեն համահարթվում ծիծաղելի իրադրությունների ու կատակերգական երկխոսությունների սրընթաց վազքով, այստեղ լուրջը միշտ դառնում է ավելի լուրջ, իսկ կատակերգականը՝ առավել կատակերգական: Եվ այս ստեղծագործություններում հնարքը, երևակայությունը միշտ զուգորդվում են բեմական և հանդիսասրահային սուր զգացողությամբ:

Ժորա Հարությունյանի դրամատուրգիայի համար կարևոր է մի բան: Նա շրջվում է մարդկանց կողմից ստեղծվող մարդկային արժեքների անջնջելիության կողմը: Հենց այդ արժեքներն են ցուցադրվում Ժորա Հարությունյանի վառ ու հետաքրքիր դրամատուրգիայում: Զգլխիչ թովչանք ունի Ժորա Հարությունյանի թատրոնը, այն մարդու, որի հետ ես կապված էի կենսախինդ և անմոռաց բարեկամությամբ, թվում է՝ առհավետ: Այդ թովչանքը հարատևում է կյանքի հորձանքներում և նրա պիեսների բուն իմաստի խորքերում: Դրանցում չկան ինքնաբավ ձևի մոդայիկհոգետանջ որոնումներ. այստեղ ինքը՝ ժամանակն է իշխում ձևին, և այդ ժամանակը Ժորա Հարությունյանի պիեսում՝ «Պարոն Շմոն և ուրիշները» վերնագրով վերջին պիեսում, վերածվում է ողբերգության: Ի դեպ, գրողի բազմաթիվ պիեսների մեջ սա այն եզակին է, որը «հագեցած է» ժանրի ողջ հարստությամբ, ողբերգական մի կատակերգություն», թեև այստեղ ևս, թվում է, նույն պերսոնաժներն են, նույն անցքերը՝ միևնույն և միաժամանակ այլ դեմքեր և այլ դեպքեր: Այս վերջին պիեսը ասես Ժորա Հարությունյանի ողջ դրամատուրգիայի վերջին ողբերգական արտահայտությունն է, նրա վառ թատերական ձևի, որտեղ ամեն ինչ և հավետ անկորնչելիորեն թատերական են:

Դրամատուրգը գեղարվեստորեն իմաստավորում է մարդու կացությունը աշխարհում և աշխարհի կացությունը և այդ անում է ոչ թե անգո մարդկանցով բնակեցված կյանքից վեր, այլ ծիծաղի անսահմանության անուրախ բերկրանքի և առանց ծիծաղի ծաղրի աշխարհում:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Պ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս